Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-591[1]-23.05.2023-ԱռՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «զ» ենթակետը եւ 2-րդ կետի «դ» ենթակետը «բնակչության» բառից առաջ լրացնել «հանրային առողջապահության՝ ներառյալ» բառերով:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասից հանել վերջին նախադասությունը:

Հոդված 3. Օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 8-րդ կետը «գործողությունների» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ սահմանափակող միջոցառումների կիրառման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով իրավունքների սահմանափակման ենթակա անձանց՝ կարանտին սահմանելու համար հիմք հանդիսացող վարակիչ հիվանդության վերաբերյալ տվյալները» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո: